



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 2010 թվականի մայիսի 12  
SEC(2010) 516

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝

*կցված*

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԻՆ  
ՈՒՂՂՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) ամփոփում

*2009 թվականին Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը  
Հայաստանի վերաբերյալ ընթացիկ զեկույց*

{COM(2010) 207}  
{SEC(2010) 513}  
{SEC(2010) 514}  
{SEC(2010) 515}  
{SEC(2010) 517}  
{SEC(2010) 518}  
{SEC(2010) 519}  
{SEC(2010) 520}  
{SEC(2010) 521}  
{SEC(2010) 522}  
{SEC(2010) 523}  
{SEC(2010) 524}  
{SEC(2010) 525}

## 1. ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Հայաստանը և ԵՄ-ն առաջին անգամ պայմանագրային հարաբերություններ հաստատեցին 1996 թվականին Գործընկերության և համագործակցության համաձայնագրով, որն ուժի մեջ մտավ 1999 թվականից: Սրա հիման վրա 2006 թվականի նոյեմբերին ընդունվեց ԵՄ-Հայաստան ԵՀՔ Գործողությունների ծրագիրը՝ հնգամյա ժամկետով:

ԵՄ-Հայաստան հանդիպումներն անցկացվեցին Համագործակցության խորհրդի, Համագործակցության կոմիտեի և Առևտրի, տնտեսական ու հարակից իրավական հարցերով ենթակոմիտեի մակարդակով: 2008 թվականին Երևանում հիմնված ԵՄ պատվիրակության ամրապնդումն էլ ավելի խթանեց ԵՄ-Հայաստան երկկողմանի հարաբերությունների ընդլայնումը: ԵՄ-Հայաստան Մարդու իրավունքների շուրջ երկխոսության առաջին հանդիպումը տեղի ունեցավ 2009 թվականի դեկտեմբերին:

Այս փաստաթղթով ներկայացվում է 2009 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման ընդհանուր առաջընթացը, թեև այս ժամանակահատվածից դուրս մնացած զարգացումներն, ըստ անհրաժեշտության, նույնպես հաշվի են առնվել: Սա Հայաստանի քաղաքական և տնտեսական իրավիճակի ընդհանուր ուսումնասիրությունը չէ: Բացի այդ, տարածաշրջանային և բազմակողմ ոլորտային գործընթացների վերաբերյալ տեղեկատվության համար խնդրում ենք ծանոթանալ ոլորտային զեկույցին:

ԵՄ-ն և Հայաստանը համաձայնել են խորացնել և ընդլայնել ԵՄ-Հայաստան հարաբերությունները: Արևելյան գործընկերությանը զուգահեռ և դրա շրջանակներում ԵՄ-ն սկսել է Հայաստանի հետ պայմանագրային հարաբերությունների ամրապնդմանն ուղղված նախապատրաստական աշխատանքները: Ասոցիացիայի համաձայնագրի համար բանակցությունների հրահանգները ԵՄ կողմից ընդունվել են 2010 թվականի մայիսին: Ապագա Ասոցիացիայի համաձայնագրի շրջանակներում, խորը և համապարփակ ազատ առևտրի գոտիների (ԽՀԱԱԳ) վերաբերյալ բանակցությունները կմեկնարկեն՝ անհրաժեշտ պայմանների բավարարման դեպքում:

Հայաստանի Հանրապետության հարցերով ԵՄ խորհրդատվական խումբն իր գործունեությունն սկսեց 2009 թվականի ապրիլ ամսին՝ նպատակ ունենալով օժանդակել հայաստանյան իշխանություններին ԵՀՔ Գործողությունների ծրագրի առանցքային ոլորտների կիրարկման հարցում, որոնք, մասնավորապես, վերաբերում են ժողովրդավարական կառույցների և մարդու իրավունքների ամրապնդմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, առևտրի ու մաքսային ոլորտներին, և հարկաբյուջետային քաղաքականությանը՝ ներառյալ պարտքի կառավարմանը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանն առաջընթաց է արձանագրել ԵՀՔ Գործողությունների ծրագրի մի քանի ոլորտներում: ԵՄ-ի հետ մարդու իրավունքների շուրջ կանոնավոր երկխոսության մեկնարկը մեծապես նպաստել է ԵՄ-ի հետ քաղաքական երկխոսության բնագավառում լուրջ առաջընթացին: 2008 թվականի փետրվարին կայացած նախագահական ընտրություններին հաջորդած ներքին քաղաքական ճգնաժամին անդրադառնալու ուղղությամբ դրական քայլեր են արվել, որոնցից են՝ հունիսին հայտարարված համաներումը, փոփոխությունները Քրեական օրենսգրքում և խորհրդարանական *Ժամանակավոր* հանձնաժողովի զեկույցի հրապարակումը: Լավ առաջընթաց է գրանցվել կոռուպցիայի դեմ պայքարի և Մարդու իրավունքների պաշտպանի դերի ուժեղացման ոլորտում իրավական դաշտի բարելավման ուղղությամբ:

Գլոբալ տնտեսական ճգնաժամը խորը ազդեցություն է թողել Հայաստանի վրա և հանգեցրել է զգալի տնտեսական անկման: Ընդհանուր առմամբ, իշխանություններն արագ են արձագանքել՝ ձեռնարկելով ճգնաժամի ազդեցությունը մեղմացնելուն ուղղված միջոցներ: Այնուամենայնիվ, պետական եկամուտների նվազումը որոշ խոչընդոտներ է առաջացրել Հայաստանում ընդհանուր ներքին տնտեսական և սոցիալական բարեփոխումների, այդ թվում՝ ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում:

Մաքսային և հարկային ոլորտներում առաջընթաց է արձանագրվել: Հայաստանը շարունակել է բարեփոխումների իրականացումը ֆինանսական ծառայությունների և մրցակցային քաղաքականության ոլորտներում: ԽՀԱԱԳ վերաբերյալ բանակցությունների նախապատրաստման համատեքստում արձանագրվել է սահմանափակ առաջընթաց փաստահավաք այցից հետո ԵՄ կողմից առաջարկված և Հայաստանի իշխանությունների կողմից հաստատված հիմնական բարեփոխումների ուղղությամբ: Լրացուցիչ էական ջանքեր գործադրելու դեպքում, Հայաստանը պատրաստ կլինի ԽՀԱԱԳ վերաբերյալ բանակցություններն սկսելու համար:

Հայաստանը մեծ քայլ է արել տարածաշրջանային համագործակցության և Թուրքիայի հետ երկխոսության ուղղությամբ, ինչի արդյունքում 2009 թվականի հոկտեմբերին երկկողմանի հարաբերությունների հաստատման և զարգացման երկու պատմական արձանագրություններ ստորագրվեցին: 2010 թվականի ապրիլին Հայաստանը կասեցրեց երկու արձանագրությունների վավերացման գործընթացը: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացը հետևողականորեն շարունակելու Հայաստանի պատրաստակամությունը գոհացնում էր ԵՄ-ին, որը մինչև ժամանակ մտահոգություն հայտնեց այս գործընթացում պահը կորցնելու կապակցությամբ: Ինչ վերաբերում է Ադրբեջանի հետ երկխոսությանը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված՝ ամենաբարձր մակարդակով բանակցությունները զգալիորեն ակտիվացել են:

Հայաստանը զգալի քայլեր է կատարել ԸԱԱՔ հռչակագրերին համահունչ քաղաքականության որդեգրման ուղղությամբ և ընդհանուր առմամբ բավականին մեծ ակտիվություն է ցուցաբերում ԸԱԱՔ-ին առնչվող հարցերի շուրջ համագործակցության գործում:

Հայաստանի իշխանությունները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցել են Արևելյան գործընկերության շրջանակներում ծավալված բազմակողմ գործողություններին՝ մասնավորապես բաց երկխոսության և չորս թեմատիկ հենքերի աշխատանքներում իրենց ներդրումն ունենալու միջոցով: Արևելյան գործընկերության երկկողմ տարրերի հետ մեկտեղ, այն նպաստել է ԵՄ-Հայաստան հարաբերությունների ամրապնդմանը և ԵՀՔ գործողությունների ծրագրի առաջնահերթությունների ուղղությամբ հետագա գործողությունների խորացմանը:

Գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար Հայաստանը պետք է լրացուցիչ ջանքեր գործադրի՝ ապահովելու համար 2008 թվականի մարտին տեղի ունեցած իրադարձությունների ուսումնասիրության խորհրդարանական *ժամանակավոր* հանձնաժողովի զեկույցում ներկայացված առաջարկությունների կատարումը, բարելավի ընտրական չափանիշները և ամրապնդի լրատվամիջոցների ազատությունը: Բացի դրանից, կարևոր նշանակություն ունեն հետագա բարեփոխումներն արդարադատության և իրավունքի գերակայության, հատկապես դատական մարմնի անկախության, դատախազության բարեփոխումների և բոլոր բնագավառներում ընդունված օրենսդրության պատշաճ կիրառման ոլորտներում: Իշխող քաղաքական ուժերի և

ընդդիմության միջև ինտենսիվ երկխոսությունը կնպաստի երկրի ժողովրդավարական զարգացմանը:

## 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐ

### *Ժողովրդավարություն և իրավունքի զերակայություն*

2009 թվականի մայիսին տեղի ունեցան Երևանի քաղաքապետի և ավագանու առաջին **ընտրությունները**: Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը եզրակացրեց, որ չնայած ընտրությունների կազմակերպչական մասը մեծապես համապատասխանում էր եվրոպական ստանդարտներին, սակայն ընտրական վարքի բարելավումը և իրական ժողովրդավարական մշակույթը իշխանությունների կողմից առանց ուշադրության մնացին: Ընտրություններին նախորդող ժամանակահատվածում լրատվամիջոցների լուսաբանումն ընդհանուր առմամբ հավասարակշռված էր, բայց ընտրությունների ընթացքում տեղի ունեցան խախտումներ, այդ թվում՝ ընտրություններին նախորդող բռնություն, քվեատուփերի լցումներ, բազմակի քվեարկության դեպքեր և ընտրողների ահաբեկում: Ընդդիմությունը բոյկոտեց նորընտիր ավագանուն:

Իշխանությունները մի շարք քայլեր ձեռնարկեցին անդրադառնալու քաղաքական ճգնաժամին, որը պայմանավորված էր 2008 թվականի նախագահական ընտրություններով և դրան հաջորդած մարտ ամսվա բռնի գործողություններով: 2009 թվականի հունիսին Ազգային ժողովն ընդունեց համաներում, որը տարածվեց 2008 թվականի մարտի դեպքերի հետ կապված գործերի մեծ մասի վրա: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՄՎ) ողջունեց համաներումը՝ դրա հետ մեկտեղ մտահոգություն արտահայտելով առանց էական հաստատող ապացույցների և միայն ոստիկանության ցուցմունքների վրա հիմնված մեղադրանքների և դատավճիռների վերաբերյալ: Համաներումը ազատվեցին 2008 թվականի մարտի դեպքերի հետ կապված անձանց մեծ մասը, բայց այս դեպքերի հետ կապված մեղադրանքներով ձերբակալված անձանց որոշ մասը դեռ մնում է կալանքի տակ: ԵԽ Վենետիկի հանձնաժողովի առաջարկություններին համապատասխան՝ 2009 թվականի մարտին փոփոխություններ կատարվեցին Քրեական օրենսգրքում՝ կապված զանգվածային անկարգությունների և իշխանության զավթման հետ:

Փաստահավաք խմբի ընդդիմության ներկայացուցիչ անդամների ու Մարդու իրավունքների պաշտպանի միջև առկա լուրջ լարվածությունների պատճառով՝ 2009 թվականի հունիսին Նախագահը որոշեց լուծարել 2008 թվականի մարտի դեպքերի ուսումնասիրությամբ զբաղվող փաստահավաք խումբը՝ վերջինիս զեկույցի հրապարակումից հետո: 2008 թվականի մարտին տեղի ունեցած իրադարձությունների ուսումնասիրության խորհրդարանական *ժամանակավոր* հանձնաժողովը, որը բոյկոտվել էր ընդդիմության կողմից, 2009 թվականի սեպտեմբերին իր վերջնական զեկույցը ներկայացրեց Ազգային ժողով: Չնայա որ ԵԽՄՎ համազեկուցողները գտան, որ դեպքերը զեկույցում ներկայացված էին շատ միակողմանիորեն, այնուամենայնիվ, դրանում ներկայացվում էր առաջարկությունների մի համապարփակ փաթեթ, որոնցով իշխանություններին կոչ էր արվում միջոցներ ձեռնարկել՝ մահվան դեպքերի համար պատասխանատու անձանց բացահայտելու և քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Իշխանությունները պետք է ավելի շատ ջանքեր ներդնեն զեկույցի առաջարկությունների իրականացմանը հետամուտ լինելու հարցում:

2008 թվականի մարտի դեպքերի հետ կապված դատավարությունների դիտանցմամբ բացահայտվեցին տարբեր բնույթի բացթողումներ՝ կապված արդար դատավարության և ազատության իրավունքի հետ՝ ներառյալ մինչդատական կալանքի չափից դուրս շատ

կիրառումը, դատավորների անաչառության և անկախության բացակայությունը, ոստիկանության ձեռք բերած մեղադրական ցուցմունքների և անօրինական կերպով ձեռք բերված ապացույցների օգտագործումը և մեղադրյալի բացակայությամբ մի շարք դատավարությունների անցկացումը: 2008 թվականի մարտի դեպքերի մեջ ներգրավված չորս ոստիկանների գործով դատավճիռ կայացվեց 2009 թվականի դեկտեմբերին: Մահվան տասը դեպքերի քրեական հետապնդման արդյունքում դեռ ոչ մեկին պաշտոնական մեղադրանք չի առաջադրվել:

**Դատական** համակարգի բարեփոխումները, այդ թվում՝ Դատական օրենսգրքի, «Դատախազության մասին» և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքների փոփոխությունները շարունակվել են 2009 թվականին: Դատաիրավական բարեփոխումների իրականացման ռազմավարական գործողությունների 2009-2011 թվականների ծրագիրն ընդունվեց 2009 թվականի ապրիլին: Արձանագրվեց լավ առաջընթաց՝ 2009 թվականին դատավորների աշխատավարձերի էական բարձրացման հարցում: Սակայն դատաիրավական համակարգի անկախությունը դեռ մտահոգիչ է, և այն ամրապնդելու ուղղությամբ անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր: Ընդհանուր առմամբ, ավելի շատ ջանքեր են պահանջվում բոլոր ոլորտներում օրենսդրության պատշաճ կիրառման ապահովելու համար: Սեփականության իրավունքի ներպետական պաշտպանությունը շարունակում է մնալ մտահոգիչ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վարույթում գտնվող Հայաստանի դեմ ներկայացված գործերի մեծ մասը կապված է սեփականության իրավունքի խախտումների հետ: ԵՄ-ն զգալի օժանդակություն է տրամադրում արդարադատության ոլորտում բարեփոխումների համար՝ Արդարադատության համակարգի բարեփոխումների ոլորտային բյուջետային աջակցության ծրագրի (18 միլիոն եվրո) և Եվրոպայի խորհրդի հետ համատեղ իրականացվող՝ «Արդարադատության մատչելիությունը» ամրապնդելու վերաբերյալ համատեղ ծրագրի միջոցով (4 միլիոն եվրո):

Կարևոր քայլեր են ձեռնարկվել՝ բարելավելու **կոռուպցիայի դեմ պայքարի** ոլորտում օրենսդրական դաշտը: 2009 թվականի հոկտեմբերին ընդունվել են հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 գործողությունների ծրագիրը, որոնք ներառում են դիտանցման և գնահատման համակարգի ստեղծումը: Ռազմավարության համաձայն՝ նախատեսվում է ստեղծել հակակոռուպցիոն հարցերով քարտուղարություն՝ գործողությունների ծրագրի իրականացմանն ու դիտանցմանն օժանդակելու նպատակով: Նախագծի մշակման գործընթացում ներգրավված էին քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և համապատասխան միջազգային կազմակերպությունները: 2009 թվականի սեպտեմբերին Հայաստանը ստորագրեց «Արդյունավետ կառավարման և կոռուպցիայի դեմ պայքարի մասին» ՏՀԶԿ Աստանայի հռչակագիրը: Վարչապետի աշխատակազմը մշակեց քաղաքական գործունեության թափանցիկության վերաբերյալ մի հայեցակարգային փաստաթուղթ՝ կանոնակարգելով շահերի բախումները և ստեղծելով բարձրաստիճան պաշտոնյաների և իրենց մերձավոր ազգականների եկամուտների, գույքի ու շահաբաժինների հայտարարագրման պետական ռեգիստր: Ջանքեր են գործադրվել՝ հակակոռուպցիոն հարցերում քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ուղղությամբ: Այնուամենայնիվ, չնայած լավ օրենսդրական առաջընթացին՝ միջազգային հետազոտությունները 2009 թվականի կոռուպցիայի ընկալման ոչ մի նվազեցում չեն գրանցել, ինչը ցույց է տալիս, որ այս ոլորտում արդյունավետ կիրառման անհրաժեշտություն կա:

Քայլեր են ձեռնարկվել տեղական ժողովրդավարությունն ուժեղացնելու ուղղությամբ: Ինչպես արդեն ներկայացվեց, 2009 թվականի մայիսին առաջին անգամ համամասնական ընտրակարգով ընտրվեցին Երևանի քաղաքապետն ու ավագանին՝ փոխարինելով նախագահի կողմից նշանակվելու նախկինում գործող համակարգը: 2009 թվականի մայիսին ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով՝ ուղղված միջհամայնքային միավորումների

ստեղծման և համայնքների ընդլայնման միջոցով տեղական ինքնակառավարման ուժեղացման ու համայնքների միջև ցանցերի ընդլայնման գործողությունների ծրագիր մշակելու համար՝ նպատակ ունենալով ռացիոնալիզացնել ծառայությունների մատուցումը: 2009 թվականի հոկտեմբերին Նախագահի աշխատակազմին առընթեր ստեղծվեց **Քաղաքացիական ծառայության բարեփոխումների** աշխատանքային խումբը՝ նպատակ ունենալով մշակել քաղաքացիական ծառայության բարեփոխումների ծրագիրը:

### ***Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ***

2009 թվականի դեկտեմբերից սկսվեց ԵՄ-Հայաստան **Մարդու իրավունքների** գծով պարբերական երկխոսությունը: 2009 թվականի աշնանը ստեղծված աշխատանքային խմբի հետ միասին աշխատանքներ են ընթանում Մարդու իրավունքների հայկական ազգային առաջին գործողությունների ծրագիրը մշակելու համար՝ հայեցակարգային փաստաթուղթ պատրաստելու և դրա գործողությունների շրջանակը սահմանելու ուղղությամբ: Սակայն, քաղաքացիական հասարակության ներգրավման հարցը շարունակում է մնալ բաց:

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի (ՄԻՊ) անկախությունը քաղաքական համակարգում և նրա դերը մարդու իրավունքների պաշտպանության հարցում ավելի է ամրապնդվել: Ընդհանուր առմամբ, ՄԻՊ գրասենյակի կողմից ստացված բողոքների թվի հարցում աճի միտումներ են նկատվում, ինչը վկայում է այս ինստիտուտի նկատմամբ ավելացող վստահության մասին: 2009 թվականի դեկտեմբերին Մարդու իրավունքների պաշտպանը դատական դիտանցման զեկույց պատրաստեց 2008 թվականի մարտի դեպքերի հետ կապված քրեական հետապնդումների և Հայաստանի դատական համակարգում արդար դատավարության չափորոշիչների իրականացման գնահատման վերաբերյալ: Բացի տարեկան զեկույցից՝ 2009 թվականին ՄԻՊ գրասենյակը հրապարակեց նաև զեկույցներ ազգային դատարանների կողմից Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրարկման, սոցիալական իրավունքների պաշտպանության և զինված ուժերում կարգապահական պատիժների կիրառման հարցերի վերաբերյալ: 2009 թվականի հոկտեմբերին սկսվեց ՄԻՊ գրասենյակի տեխնիկական և կազմակերպչական կարողություններին օժանդակելուն ուղղված *թվինից* ծրագիրը:

2009 թվականին Հայաստանը մի շարք զեկույցներ ներկայացրեց ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններ, այդ թվում՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի, «Ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատիժների դեմ կոնվենցիայի» կիրարկման մասին զեկույցները: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» և «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի կիրարկման մասին զեկույցները պատրաստվել են, և ակնկալվում է, որ դրանք կներկայացվեն ՄԱԿ 2010 թվականին: Երկիրն ուշացնում է ընդհանուր թվով հինգ պարտադիր պարբերական հաշվետվությունների ներկայացումը ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններ: 2009 թվականի մայիսին Հայաստանը ներկայացրեց իր երրորդ զեկույցը՝ Եվրոպական սոցիալական խարտիայի կիրարկման վերաբերյալ: Կոմիտեի եզրակացությունները հրապարակվեցին 2010 թվականի հունվարին:

«Ազգային փոքրամասնությունների մասին» ԵԽ շրջանակային կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ երրորդ պարբերական զեկույցը ներկայացվեց 2009 թվականի նոյեմբերին: Հայաստանը մշտական հրավեր է հղել ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերին:

2009 թվականին շարունակում էին հաղորդագրություններ ստացվել կալանավայրերում և ոստիկանության կողմից **խոշտանգումների և վատ վերաբերմունքի** դեպքերի մասին, այդ

թվում՝ 2008 թվականի մարտի դեպքերի հետ կապված կալանավորվածների և ժամկետային զինձառայողների նկատմամբ, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում և ոստիկանական բաժանմունքներում: Խոշտանգումների և վատ վերաբերմունքի մասին որևէ տվյալ չկա, իսկ վատ վերաբերմունքի վերաբերյալ քննությունների բացակայությունը մտահոգիչ է: Հայաստանը շարունակեց քայլեր ձեռնարկել Խոշտանգումների դեմ կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության (ԽԴԿԼԱ) կիրարկման ուղղությամբ և 2009 թվականի դեկտեմբերին ներկայացրեց ԽԴԿԼԱ-ի կիրարկման վերաբերյալ առաջին զեկույցը: Պետք է ապահովվի ԽԴԿԼԱ-ի ազգային կանխարգելիչ մեխանիզմում քաղաքացիական հասարակության ներգրավվածության օրենսդրական հիմքը: Անհրաժեշտ է հետագա փոփոխություններ կատարել «Այլընտրանքային զինվորական ծառայության մասին» օրենքում՝ այն ամբողջովին Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխանեցնելու և իրական քաղաքացիական ծառայություն ապահովելու նպատակով:

Չանքեր են ներդրվել **բանտային պայմանները** բարելավելու ուղղությամբ: 2009 թվականի դեկտեմբերին ընդունվեց քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքների բարեփոխումների հայեցակարգը, ինչպես նաև նոր քրեակատարողական հիմնարկի պլանը: Նոր քրեակատարողական հիմնարկի շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: Սակայն կալանավայրերի ընդհանուր պայմանները և մինչդատական կալանքի չափից դուրս հաճախակի կիրառումը, ինչպես նաև հետզհետե աճող բանտարկյալների թիվը շարունակում են մնալ մտահոգիչ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար երաշխավորված է կալանավայրեր, բայց ոչ ոստիկանական բաժանմունքներ մուտք գործելու հնարավորությունը:

**Արտահայտվելու և լրատվամիջոցների ազատության** ոլորտի օրենսդրությունում փոփոխություններ են կատարվել: 2009 թվականի ապրիլին ընդունվել է չորս օրենք, որոնցով փոփոխություններ են կատարվում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ու Հանրային հեռուստաընկերության և ռադիոյի խորհրդի կանոնակարգերում՝ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի առաջարկությունների մեծ մասը: Այնուհանդերձ, հեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների կազմն ու անդամների նշանակման կարգը հարցեր են առաջացնում՝ կապված դրանց լիարժեք անկախության հետ: Հեռուստառադիոհեռարձակման թվայնացման ընթացքի համաձայն՝ հեռուստառադիոհեռարձակման լիցենզիաների տրամադրման գործընթացի վրա մինչև 2010 թվականի հուլիս ամիսը մորատորիում կիրառելուց հետո՝ 2009 թվականի նոյեմբերին Կառավարությունը հրապարակել է թվային հեռարձակման անցնելու հայեցակարգի նախագիծը՝ հիմնական շեշտը դնելով թվայնացման գործընթացի տեխնոլոգիական և տնտեսական ասպեկտների վրա:

2009 թվականին նվազել է լրագրողների դեմ բռնությունների և նրանց անհաբեկումների գրանցված դեպքերի թիվը, բայց դրանց հետաքննության արդյունքում ոչ մեկին մեղադրանք չի առաջադրվել:

2009 թվականին երթեր կազմակերպելու վերաբերյալ ընդդիմության ներկայացրած մի շարք դիմումներ մերժվել են իշխանությունների կողմից: Երթերի և ցույցերի վերաբերյալ օրենքը մեծ մասամբ համապատասխանում է Եվրոպայի խորհրդի չափանիշներին, բայց ժողովների անցկացումն արգելող հիմքերին վերաբերող որոշ դրույթներ լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն: Սակայն 2009 թվականին արձանագրվել են մի շարք դեպքեր, որոնք վերաբերում են երթերի մասնակիցներին ցրելու համար ոստիկանության միջամտությանը և մարզերից Երևան եկող հանրային տրանսպորտի մասնակի բացակայությանը, ինչը համընկնում էր ընդդիմության կազմակերպած երթերի հետ:

**Քաղաքացիական հասարակության** հետ քննարկումներ անցկացնելու համար 2009 թվականի մարտին ստեղծվեց Հանրային խորհուրդը՝ նպատակ ունենալով հարթակ ապահովել հասարակական շահերին վերաբերող հարցերի հանրային քննարկումների համար: Հանրային խորհրդի անկախությունը շարունակում է մնալ վիճարկելի ընդդիմության և մի շարք ՀԿ-ների կողմից: Ընդհանուր առմամբ, օրենքների նախագծերի վերաբերյալ Կառավարության և ՀԿ-ների միջև քննարկումները և խորհրդարանական լսումներին նրանց մասնակցությունը թեև ավելացել է, բայց շարունակում է իրականացվել միանգամյա հիմունքներով: Այնուհանդերձ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ քննարկումներ տեղի չեն ունեցել Կառավարության մշակած «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի նոր փոփոխությունների կապակցությամբ: Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների կողմից հնչեցված քննադատությունը, որը կապված էր ՀԿ-ների աշխատանքների տարեկան հաշվետվությունների ծրագրվող պարտադիր հրապարակումների հետ խորհրդարանում այդ փոփոխությունները ժամանակավորապես կասեցվեցին:

«Կանանց կարգավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման» 2004-2010 թվականների ազգային գործողությունների ծրագրի իրականացման աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում շարունակվեցին: Սակայն հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների վերաբերյալ օրենքը դեռ չի ընդունվել և ընտանեկան բռնությունը քրեականացնող օրենքի նախագիծը դեռ քննարկման փուլում է: Գենդերային հավասարության ոլորտում համարժեք օրենսդրության անհրաժեշտություն կա, որն արդյունավետ կերպով կանդրադառնա ընտանեկան բռնության հարցերին և կմեծացնի քաղաքական և տնտեսական կյանքում կանանց մասնակցությունը:

2009 թվականի սեպտեմբերին Հայաստանը ստորագրեց «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի լրացուցիչ արձանագրությունը: Լրացուցիչ ջանքեր են պահանջվում արհեստակցական միությունների իրավունքների և կոլեկտիվ պայմանագրերի կնքման շուրջ բանակցությունների ապահովման համար: **Աշխատանքային իրավունքների** մասին օրենսդրության մշակման աշխատանքները շարունակվում են: 2009 թվականի դեկտեմբերին, Կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո, խորհրդարան է ուղարկվել Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների մասին օրենքի նախագիծը:

***Արտաքին և անվտանգության քաղաքականությունների, հակամարտությունների կանխման և ճգնաժամերի կառավարման շուրջ համագործակցությունը:***

Հայաստանը շարունակում է կոնկրետ դեպքերի առնչությամբ ԸԱԱՔ հոչակագրերին համահունչ քաղաքականություն որդեգրելու ուղղությամբ աշխատանքները: 2009 թվականին Հայաստանը իրականացրել է համապատասխանության ապահովումը ԸԱԱՔ 138 հոչակագրերից 108-ի գծով: 2009 թվականին Հայաստանի Կառավարության հետ բավականին արդյունավետ քաղաքական երկխոսություն է եղել, այդ թվում՝ Քաղաքական և անվտանգության հարցերով կոմիտեի եռյակի հետ՝ 2009 թվականի փետրվարին և դեկտեմբերին կայացած երկու հանդիպումների, և 2009 թվականի հուլիսին ԵՄ արտաքին գործերի նախարարների եռյակի՝ Հայաստան այցելության միջոցով:

Հայաստանը շարունակեց համագործակցությունը ՄԱԿ-ի հետ, մասնակցեց ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրին և համագործակցեց Միավորված ազգերի կազմակերպության Թմրանյութերի և հանցավորության հարցերով գրասենյակի (UNODC), Ինտերպոլի, Համաշխարհային մաքսային կազմակերպության, ԱՊՀ և ԵՄ փորձագետների հետ՝ ահաբեկչության հետ կապված հարցերի մասին տեղեկատվության փոխանակման



շրջանակներում: Հայաստանն արդյունավետ կերպով համագործակցել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարության (UNSC) 1373 բանաձևով ստեղծված ՄԱԿ-ի Հակահարկաբեկչական կոմիտեի (CTC) հետ:

**Միջազգային քրեական դատարանի** Հռոմի կանոնադրության ստորագրման և վավերացման ուղղությամբ որևէ առաջընթաց չկա:

### ***Տարածաշրջանային համագործակցության ամրապնդում***

2009 թվականի հոկտեմբերին Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարները ստորագրեցին երկու արձանագրություններ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և երկկողմ հարաբերությունների զարգացման մասին, այդ թվում՝ ընդհանուր սահմանի բացման հեռանկարների վերաբերյալ, ինչը բավականին լուրջ քայլ էր երկու երկրների միջև հարաբերությունների նորմալացման ուղղությամբ: Արձանագրությունները ներկայացվեցին Ազգային ժողովի վավերացմանը 2010 թվականի փետրվարին: 2010 թվականի ապրիլին Հայաստանը կասեցրեց երկու արձանագրությունների վավերացման գործընթացը, բայց վերահաստատեց Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացը շարունակելու իր պատրաստակամությունը:

Հարավային Կովկասի սահմանների ինտեգրված կառավարումը (SCIBM), որը նախաձեռնվել է ԵՄ կողմից՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ներգրավմամբ, պետք է սկսվեր 2009 թվականի հունվարին, բայց հետաձգվեց՝ Ադրբեջանի կողմից բարձրացված հարցերին անդրադառնալու համար: Կիրարկման պայմանները ներկայումս ընդունվել են բոլոր երեք երկրների կողմից և իրականացման գործընթացն սկսվել է 2010 թվականի մարտին *(տե՛ս արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով համագործակցության վերաբերյալ 5-րդ գլուխը)*:

Հարավային Կովկասում Թմրանյութերի դեմ պայքարի գործողությունների ծրագիրը (SCAD V) ավարտվեց 2009 թվականին: Գործողությունների արդյունքները լավագույնս ամրապնդելու և թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարում տարածաշրջանային ջանքերը շարունակելու հարցերի շուրջ քննարկումներն այժմ շարունակվում են:

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ՏԲԿ) նոր դեկլարությունը (հայ, ադրբեջանցի և վրացի գործադիր տնօրեններից կազմված եռյակը) ձեռնամուխ եղավ իր պարտականությունների կատարմանը 2009 թվականի հունվարին, ինչը համախմբեց ՏԲԿ-ն ֆինանսապես և ներքին կազմակերպական հարցերի առումով: ՏԲԿ-ն 2009 թվականին տարածաշրջանային աշխատանքներ իրականացրեց, հատկապես տեղեկատվության և հասարակական մասնակցության, բնապահպանական քաղաքականության և բնապահպանության ոլորտում տեղական գործողությունների ծրագրերի, լեռնային շրջանների պաշտպանության և կայուն զարգացման բնագավառներում: Սա կարևոր նշանակություն ունեցող գործիք է, որը խթանում է Հարավային Կովկասի ապագայի համար անհրաժեշտ տարածաշրջանային համագործակցությունը և կայունությունը:

Բարձրագույն կրթության ոլորտում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի համալսարանները համագործակցել են հեռակա և առցանց ուսուցման ծրագրերի շրջանակներում: Սա առաջին անգամն է, որ նման տարածաշրջանային համագործակցություն է իրականացվում *Տեմպուս* ծրագրի շրջանակներում:

## ***Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը նպաստելը***

Մինսկի խմբի շրջանակներում խաղաղ կարգավորման շուրջ բանակցությունները զգալիորեն ակտիվացան 2009 թվականին և նպաստեցին երկխոսության խորացմանը հանգեցնելով մեկ տարվա ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի Նախագահների վեց երկկողմ հանդիպման անցկացմանը: Բացի դրանից, մի շարք հանդիպումներ տեղի ունեցան երկու երկրների արտաքին գործերի նախարարների միջև, այդ թվում՝ 2009 թվականի դեկտեմբերին Աթենքում ԵԱՀԿ նախարարների խորհրդի ընթացքում: Հակամարտության կարգավորման ուղիներ գտնելու համար երկու կողմերից էլ համարձակ քայլեր կապահանջվեն:

2009 թվականի հուլիսին Լ'Աքվիլայում «Մեծ ութնյակի» զագաթնաժողովի ժամանակ նախագահների մակարդակով արված ԵԱՀԿ Մինսկի խմբի համատեղ հայտարարությամբ կոչ արվեց «Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին լուծել իրենց միջև մնացած տարաձայնությունները և վերջնական համաձայնության գալ այդ Հիմնարար սկզբունքների շուրջ, ինչը համապարփակ կարգավորման ուղենիշ կհանդիսանա»: Սակայն ընդհանուր լարվածությունները դեռ առկա են, և իրավիճակը շարունակում է անկայուն մնալ: Շարունակում են հաղորդագրություններ ստացվել շփման գծում տեղի ունեցող փոխհրաձգությունների և մահվան դեպքերի մասին, ինչը մտահոգությունների տեղիք է տալիս:

### **3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ**

#### ***Մակրոտնտեսական համակարգ և գործող շուկայական տնտեսություն***

Համընդհանուր տնտեսական անկումը և, հատկապես, Ռուսաստանի տնտեսության վիճակի արագ վատթարացումը լուրջ ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա 2009 թվականին: Տնտեսական ակտիվությունը, որը 2008 թվականի վերջին եռամսյակում սկսեց անկում ապրել, 2009 թվականին կրճատվեց մոտ 15.4 տոկոսով, ինչը կտրուկ շրջադարձ էր՝ համեմատած նախորդ տարիներին գրանցված աճի տեմպերի հետ: Դրա պատճառը շինարարության ոլորտի անկումն էր 38 տոկոսով, ինչն անմիջական հետևանք էր դրամական փոխանցումների մոտ 28 տոկոսով նվազման և արդյունաբերական արտադրության ծավալների մոտ 10 տոկոսով կրճատման:

Իշխանություններն արագ արձագանքեցին և ընդունեցին միջոցներ՝ ուղղված արտադրության ծավալների կտրուկ անկման հետևանքների մեղմացմանը: 2009 թվականի մարտին նրանք վերադարձան ամբողջովին լողացող փոխանակման կուրսի ռեժիմին՝ թույլատրելով եվրոյի և ԱՄՆ դոլարի համեմատությամբ հայկական դրամի մոտավորապես 22 տոկոսով *դե ֆակտո* արժեզրկումը: Այս քայլն օգնեց բարձրացնել մրցունակությունը՝ առանց վտանգելու ֆինանսական կայունությունը, քանի որ արժեզրկման բացասական հետևանքները մեծամասամբ վերացվել էին: Միննույն ժամանակ նրանք համաձայնության եկան ԱՄՆ-ի հետ 790 միլիոն ԱՄՆ դոլարի (553 միլիոն եվրոյի) համաձայնագրի վերաբերյալ՝ դրա հետ մեկտեղ լրացուցիչ ֆինանսավորում ապահովելով այլ բազմակողմ և երկկողմ դոնորներից (ներառյալ 500 միլիոն ԱՄՆ դոլար (350 միլիոն եվրո) կայունացման վարկը Ռուսաստանի Դաշնությունից)՝ աստիճանաբար աճող ֆինանսական կարիքները բավարարելու նպատակով:

Հարկաբյուջետային քաղաքականությունը նպաստավոր էր տնտեսության համար, որտեղ ծախսային ծրագրերում շեշտը դրված էր հակակոռուպցիոն ծավալուն միջոցների, օտարերկրյա ֆինանսավորմամբ ավելացող կապիտալ ներդրումների և սոցիալական կարիքներին ուղղված ծախսերի վրա: Մասամբ արտաքին փոխառությունների շնորհիվ,

իշխանությունները կարողացան առանց ծախսերի էական կրճատման դիմակայել հարկային եկամուտների մոտ 15 տոկոսով նվազեցմանը՝ մինևույն ժամանակ հաշվի առնելով ֆինանսական դժվարությունները և պարտքի ընդունելի շեմի վերաբերյալ հարցերը: Արդյունքում ակնկալվում է, որ 2009 թվականին բյուջետային դեֆիցիտը կավելանա մինչև ՀՆԱ-ի 7.5 տոկոսը, իսկ պետական պարտքը՝ ՀՆԱ-ի 37 տոկոսը: Մինևույն ժամանակ հարկաբյուջետային ոլորտի կառուցվածքային բարեփոխումների օրակարգում դրական տեղաշարժ է արձանագրվել՝ ԱԱՀ փոխհատուցման գործընթացի բարելավման և խոշոր հարկատուների համար էլեկտրոնային եղանակով հարկային եկամուտների հայտարարագրեր ներկայացնելու համակարգի ներդրման միջոցով:

Դրամավարկային քաղաքականությունը մեղմացավ, և Հայաստանի կենտրոնական բանկը (ՀԿԲ) 2009 թվականին նվազեցրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը ապրիլի 7.75 տոկոսից մինչև սեպտեմբեր հասցնելով 5 տոկոսի՝ տնտեսության վերականգնմանը նպաստելու նպատակով: Տարբեր ուղիներով այն ավելացրեց նաև դրամի իրացվելիությունը, այդ թվում՝ պետական արժեթղթերի ձեռքբերման և իր ռեպո գործարքների մարման ժամկետների երկարաձգման միջոցով: Սակայն, փոխանցվելիության թույլ մեխանիզմների պատճառով բանկային վարկավորման տոկոսադրույքները շարունակեցին մնալ 18 տոկոս, ինչը իշխանություններին ստիպեց լրացուցիչ քայլեր ձեռնարկել, ինչպես օրինակ՝ Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջոցով դոնորների կամ վարկատուների տրամադրած վարկային ռեսուրսներով որոշակի ՓՄՁ-ների և խոցելի արդյունաբերական ճյուղերի վերավարկավորումը: Փոխանցվելիության թույլ մեխանիզմների ազդեցությունն արտահայտվում է դոլարային ավանդների մեծ չափաբաժնով, ինչը շարունակում է մնալ մոտ 70 տոկոս:

Թույլ պահանջարկի պայմաններում և չնայած 2009 թվականի մարտին դրամի արժեզրկմանը՝ սղաճի միջին ցուցանիշը մնաց մոտ 3,4 տոկոս մակարդակի վրա: Այնուհանդերձ, 2009 թվականի դեկտեմբերին սղաճը հասավ 6.5 տոկոսի՝ միջազգային գների բարձրացման, ընթացիկ տնտեսական աճի քաղաքականության, ոչ ճկուն ներքին գների և իրացվելիության ավելցուկից բխող սպեկուլյատիվ փոխարժեքի ճնշումների հետևանքով: 2009 թվականի վերջին ՀԿԲ-ն ազդարարեց մեղմ քաղաքականության ավարտը, և որոշեց աշխատել սղաճի մակարդակների կանխատեսման ռեժիմով, եթե առաջանան սղաճի ճնշումներ: Այնուհանդերձ ակնկալվում է, որ սղաճի մակարդակը 2010 թվականին կնվազի:

Արտաքին առևտրաշրջանառությունը 2009 թվականին կրճատվեց մոտ 28 տոկոսով: Մետալուրգիական արտադրանքի գների անկման հետևանքով արտահանումից գոյացող եկամուտները կրճատվեցին մոտ 37 տոկոսով, մինչդեռ ներմուծումները պակասեցին ավելի քիչ՝ 26 տոկոսով: Դրա հետևանքով, 2009 թվականի ընթացիկ դեֆիցիտը մեծացել և հասել է ՀՆԱ-ի 13.7 տոկոսի: Այս ամենը արտաքին ուղղակի ներդրումների կրճատման հետ զուգահեռ, լուրջ մտահոգություններ են առաջացնում Հայաստանի տնտեսության մրցունակության վերաբերյալ:

### ***Զբաղվածություն և սոցիալական քաղաքականություն***

Տնտեսական ճգնաժամի հետևանքով, որը լուրջ ազդեցություն թողեց Հայաստանի վրա, Կառավարությունը որոշեց ժամանակավորապես կասեցնել **Աղքատության հաղթահարման** գծով կայուն զարգացման ծրագիրը:

Ըստ պաշտոնական տվյալների՝ **գործազրկության** մակարդակը 2009 թվականի վերջին կազմում էր 7.1 տոկոս: Հատկապես մեծ է գործազրկությունը երիտասարդների և կանանց շրջանում, որոնք կազմում են պաշտոնական գործազուրկների համապատասխանաբար 20.7 և 70.7 տոկոսը: Զբաղվածության պետական ծառայությունները հաշվետու

ժամանակահատվածում շարունակել են գործազուրկների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպել:

Ինչ վերաբերում է **սոցիալական երկխոսությանը**, ապա 2009 թվականի մայիսին ստորագրվեցին կոլեկտիվ համաձայնագրեր սոցիալական գործընկերների հետ: Նույն ամսին Կառավարության, արհեստակցական միությունների և գործատուների ներկայացուցիչների ներգրավմամբ ստեղծվեց եռակողմ կոմիտե: 2007-2011 թվականներին «Արժանապատիվ աշխատանք» հանրապետական ծրագրի իրականացումը շարունակվեց հաշվետու ժամանակահատվածում:

**Սոցիալական ներգրավվածության և պաշտպանության** ոլորտում նոր կենսաթոշակային համակարգի ներդրումը հետաձգվեց մինչև 2011 թվականը:

**Գյուղատնտեսության** գծով կայուն զարգացման ռազմավարության իրականացումը ներկայումս ընթացքի մեջ է, և գյուղական ենթակառուցվածքի արդիականացումը շարունակվում է միջազգային դոնոր կազմակերպությունների և Հայաստանի Կառավարության ակտիվ աջակցությամբ:

2009 թվականի հունվարին **Կայուն զարգացման** ազգային խորհուրդը (ԿԶԱԽ) նիստ գումարեց երկրորդ անգամ՝ համաձայն «2008-2021 թվականների կայուն զարգացման ծրագրի»: Լրացուցիչ միջոցներ ձեռնարկվեցին՝ 2009-2012 թվականների կայուն զարգացման ծրագրի իրականացման ուղղությամբ, հատկապես ջրային ոլորտում:

#### **4. ԱՌԵՎՏՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ, ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԴԱՇՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ**

Ինչ վերաբերում է **երկկողմ առևտրին**, ապա 2009 թվականի ֆինանսական ճգնաժամի հետևանքով տնտեսական ակտիվության ընդհանուր նվազման պատճառով ԵՄ-ից արտահանումները Հայաստան նախորդ տարվա համեմատ նվազել են 20.6 տոկոսով, իսկ հայկական ապրանքների արտահանումը ԵՄ պակասել է 49.3 տոկոսով: Հայաստանից ԵՄ արտահանվող ապրանքների տեսականին շարունակում է մնալ ոչ բազմազան և 2009 թվականին արժեքային առումով քիչ է ավելացել: Ապրանքների մոտ երկու երրորդը (64.3 տոկոս) կազմում են գունավոր մետաղները, իսկ մոտ մեկ հինգերորդը (18.8 տոկոս)՝ մարգարիտը և թանկարժեք քարերը:

Հայաստանը 2009-2011 թվականների համար հնարավորություն ունի օգտվելու ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և բարելավված համակարգից» (GSP+), որը թույլ է տալիս զանազանեցնել արտահանվող ապրանքների տեսականին և բարելավել արտահանումների կատարողականը: Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի արտահանողների համար կազմակերպվել են ուսումնական դասընթացներ ԵՄ Արտահանման տեղեկատուից օգտվելու վերաբերյալ, ինչը նրանց հնարավորություն կտա լիարժեքորեն օգտվելու GSP+ համակարգի առավելություններից: 2009 թվականի ապրիլից սկսած ԵՄ խորհրդատվական խումբն օժանդակություն է տրամադրում Կառավարությանը առևտրի հետ կապված մի շարք ոլորտների շրջանակներում, հատկապես GSP+ համակարգի հնարավորություններից առավելագույնս օգտվելու և հետագայում ԵՄ-Հայաստան «Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու» (ԽՀԱԱԳ) ստեղծման ուղղությամբ:

Եվրոպական հանձնաժողովը փաստահավաք առաքելություն ուղարկեց Հայաստան 2009 թվականի փետրվարին և մանրամասն գնահատեց ԽՀԱԱԳ մասով Հայաստանի պատրաստվածությունը: Առաջարկություններ ներկայացվեցին այն հիմնական

բարեփոխումների վերաբերյալ, որոնք Հայաստանը պետք է իրականացնի ԽՀԱԱԳ բանակցային գործընթացին պատրաստ լինելու համար («առանցքային առաջարկություններ»): Այս գնահատումը հաստատվել է Հայաստանի իշխանությունների կողմից 2009 թվականի հունիսին: 2009 թվականի նոյեմբերին նախապատրաստական աշխատանքների և ապագա բանակցային գործընթացի իրականացման համար Հայաստանն ինստիտուցիոնալ կառույց ստեղծեց, որը դեռ չի գործում: Ինչ վերաբերում է մյուս առանցքային առաջարկություններին, ապա շատ քիչ առաջընթաց է արձանագրվել: Հիմնական կարգավորիչ ոլորտներում անհրաժեշտ առաջընթացի ապահովման, այդ թվում՝ վարչական կարողությունների զարգացման նպատակով, լրացուցիչ էական ջանքեր գործադրելու դեպքում Հայաստանը պատրաստ կլինի սկսելու ԽՀԱԱԳ գծով բանակցությունները:

Լավ առաջընթաց է գրանցվել **մաքսային** ոլորտում: Համապարփակ «Մաքսային վարչարարության 2008-2012 թվականների ռազմավարությունը» լրամշակվեց 2009 թվականի դեկտեմբերին՝ ռազմավարական գործողությունների ծրագրի մշակման և ներդրման միջոցով, որտեղ մանրամասնորեն ներկայացվում են ռազմավարական յուրաքանչյուր նպատակի համար ձեռնարկվելիք գործողությունները, հաջողության չափանիշը, կատարողական ցուցանիշները և թիրախային ժամկետները: 2008 թվականին էթիկայի կանոնների ներդրումից հետո, մաքսային մարմինները նախաձեռնեցին ներքին կոռուպցիոն ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացում՝ նպատակ ունենալով մշակել կոռուպցիոն ռիսկերի դեմ պայքարի գործողությունների ծրագիր: Ստեղծվեց մաքսային բրոքերների ցանց, և 125 բրոքերներ ուսումնական դասընթացներ անցան: Մաքսային մարմինները պատրաստել են մի շարք ձեռնարկներ մաքսագերծման, դասակարգման, ուղևորների զննումների, մաքսատուրքերի և հետբացթողումային հսկողության վերաբերյալ և բաժանել դրանք բոլոր մաքսակետերին: Հաշվետու ժամանակահատվածում մաքսային մարմիններն աշխատանքներ իրականացրեցին «ռիսկերի կառավարման հրահանգի» մշակման ուղղությամբ, որով սահմանվում է մաքսային ծառայողների գործունեությունը կենտրոնական գրասենյակներում, տարածքային մաքսատներում և այլ մաքսակետերում, ինչպես նաև սահմանի վրա: Այդ հրահանգը վերաբերում է ոչ միայն մաքսագերծման և զննման համակարգերին, այլ նաև պահեստավորմանը, մաքսային ռեժիմներին և հետբացթողումային հսկողությանը: Այն կկապվի հետաքննությունների իրականացման գործառնությունից հետո և կներառի ռիսկերի գնահատման կիրառումը բոլոր բնագավառներում: Հետագա բարելավումներ են պահանջվում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ ռիսկերի կառավարումը, մաքուր աշխատատեղը, այլ իրավապահ մարմինների հետ համագործակցությունը, հիմնական միջազգային մաքսային գործիքներին միանալը, վարչական վճարների վերացումը, արտոնյալ ծագման վկայագրերի ստուգումը, մաքսային ոլորտի աշխատանքների գնահատման պրակտիկան, ինչպես նաև մաքսային մարմինների դերը մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության գործում:

**Ապրանքների ազատ տեղաշարժի և տեխնիկական կանոնակարգերի** ոլորտում որոշ առաջընթաց է արձանագրվել: Գործող օրենքներում այնպիսի փոփոխություններ կատարելու և մի շարք նոր օրենքների նախագծեր են մշակվել և քննարկվել 2009 թվականի ընթացքում, որոնք ազդում են առևտրի տեխնիկական խոչընդոտների վրա, այդ թվում՝ ստանդարտացման, համապատասխանության հավաստման, չափագրման միասնական համակարգի և հավատարմագրման մասին օրենքները (փոփոխելով հավատարմագրման վերաբերյալ 2004 թվականի օրենքը): Առաջնահերթ ոլորտների ընտրությունը դեռ ընթացքի մեջ է: Էկոնոմիկայի նախարարությունը համակարգում է որակյալ ենթակառուցվածքների զարգացման ոլորտում աշխատող գործընկերների աշխատանքները: 2009 թվականի հոկտեմբերին կազմակերպվեց ազգային որակյալ ենթակառուցվածքների մասին իրազեկող միջոցառում: Երկարաժամկետ հեռանկարում կպահանջվի ապահովել ավելի մեծ

առաջընթաց՝ «Արդյունաբերական արտադրանքի համապատասխանության հավաստման և ճանաչման մասին» համաձայնագրի (ACAA) շուրջ բանակցություններն սկսելու համար:

**Սանիտարական և բուսասանիտարական** հարցերի ոլորտում Հայաստանը մշակել է ծրագիր և գործողությունների պլան 2009-2013 թվականների ժամանակահատվածի համար պարենի անվտանգության համակարգի զարգացման վերաբերյալ: Հայաստանը փոփոխություններ է կատարել բուսասանիտարության վերաբերյալ օրենքում: Պատրաստվել են պարենային ձեռնարկությունների գրանցման վերաբերյալ օրենք, ինչպես նաև փոփոխություններ անասնաբուժության մասին օրենքում, և ուժեղացվել են նրա լաբորատորիաները: Եվրոպական հանձնաժողովի՝ 2009 թվականի փետրվարին կատարած փաստահավաք առաքելությունը ցույց տվեց, որ այս ոլորտում Հայաստանը դեռ էական առաջընթացի կարիք ունի: Դա հատկապես վերաբերում է օրենսդրությանը և համապատասխան հաստատությունների միջև աշխատանքների համակարգմանը: Հայաստանում գործում են մի շարք համապատասխան օրենքներ **գործարար միջավայրի, ընկերությունների հիմնադրման և կորպորատիվ իրավունքի վերաբերյալ**՝ ներառյալ Քաղաքացիական օրենսգիրքը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը և «Սահմանափակ ընկերությունների մասին» օրենքը: Այնուամենայնիվ, չնայած որ գործող օրենսդրությունը բարձր է գնահատվում, համապատասխան օրենքների կիրարկման հարցը շարունակում է մնալ խնդրահարույց: Ավելին, բացահայտվել են թափանցիկության և հայտարարագրման պահանջների հետ կապված թերացումներ, նշվել է ազգային պաշտոնական տեղեկագրի բացակայության մասին: Պետք է ապահովվի ՏՀԶԿ կորպորատիվ կառավարման սկզբունքների հետ համապատասխանությունը, հստակ սահմանվեն կորպորատիվ կառավարման մարմինների գործառույթները, ինչպես նաև մեծամասնություն և փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքները, և պատշաճ կերպով երաշխավորվի ներդրողների, վարկատուների և փոքրամասնություն կազմող բաժնետերերի պաշտպանությունը: Պետք է նշանակվեն իրավասու և անկախ դատական կամ վարչական մարմիններ՝ որոշակի ակտերի ինկորպորացիայի կամ օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու համար: Լավ առաջընթաց է նկատվել այս ոլորտում օրենքների արդյունավետ կիրարկման, ինչպես նաև Կորպորատիվ կառավարման օրենսգրքի նախագծի մշակման մասով:

**Ֆինանսական ծառայությունների** ոլորտում Հայաստանի վրա լուրջ ազդեցություն է ունեցել ֆինանսական և տնտեսական ճգնաժամը: Հայաստանի կենտրոնական բանկը (ՀԿԲ) շարունակել է իր ջանքերը՝ բանկային արդյունավետ վերահսկողության վերաբերյալ Բազել II-ի սկզբունքները կիրառելու ուղղությամբ: ԱՄՆ-ն արձանագրել է, որ Հայաստանի բանկային ոլորտը կայուն է և լավ կապիտալացված, բայց տնտեսական անկումը կարող է ազդեցություն ունենալ վարկերի ռիսկայնության վրա, ինչի մասին արդեն վկայում է ժամկետանց փոխառությունների ավելացման միտումը: ՀԿԲ-ն քայլեր է ձեռնարկել՝ ապահովելու համար, որ այս ռիսկերի գծով ապահովվի արդյունավետ կառավարում: Բանկային հատվածում ներկայացված է ֆինանսական համակարգի ակտիվների ավելի քան 90 տոկոսը: Այս ոլորտի հիմնական դերակատարներն են շարունակում մնալ օտարերկրյա սեփականությամբ բանկերը՝ ինչը կազմում է ընդհանուր բանկային կապիտալի մոտ 65-70 տոկոսը: Ավանդների հատուցման երաշխիքների ոլորտում, 2009 թվականին փոփոխություններ են նախապատրաստվել «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքում: Կառավարությունում ներկայումս քննարկվում է կենսաթոշակային հիմնադրամների վերաբերյալ օրենսդրական փաթեթը, իսկ խորհրդարանում քննարկվում է «Պարտադիր ապահովագրության մասին» օրենքի նախագիծը՝ մեքենաների օգտագործման պատասխանատվության ապահովագրման վերաբերյալ:

## *Այլ հիմնական բնագավառներ*

**Հարկային** ոլորտում նույնպես առաջընթաց է գրանցվել: Ֆինանսների նախարարությունն աշխատել է Համախմբված հարկային օրենսգրքի վրա: Հարկային մարմիններն արդեն կիրառել են «Հարկային վարչարարության 2008-2011 թվականների ռազմավարությունում» ներառված մի քանի միջոցներ: Ստեղծվել է Հարկային գանձումների գերագույն խորհուրդ՝ այս ոլորտում առաջընթացի նկատմամբ դիտանցում իրականացնելու համար: Ընդունվել են էլեկտրոնային եղանակով հայտարարագրեր ներկայացնելու համակարգերի ներդրման և ռիսկի վրա հիմնված ստուգումների կատարելագործման ծրագրերը: Մարդկային ռեսուրսների որակավորման բարձրացման գործընթացը ներկայումս ընթացքի մեջ է և ներառում է նաև նոր վերապատրաստման կենտրոնի ստեղծումը (և՛ հարկային, և՛ մաքսային ոլորտների համար): Հարկային մարմինները լուծեցին ԱԱՀ փոխհատուցումների ուշացման հետ կապված խնդիրները և վճարեցին գոյություն ունեցող պարտքերը: Հայաստանը մշակեց և ընդունեց էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ծրագիրը, և 18 աշխատանքային խմբեր ստեղծվեցին՝ հարկային վարչարարության ավտոմատացման հարցերով զբաղվելու համար: 2009 թվականին Հայաստանը ներկայացրեց, որ ԵՄ 13 անդամ պետությունների հետ ուժի մեջ են մտել երկակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրերը, իսկ մյուսները ներկա դրությամբ ստորագրվել են կամ դրանց շուրջ բանակցություններ են վարվում: ԱՀԿ հանդեպ ստանձնած իր պարտավորություններին համահունչ՝ ԱԱՀ գծով խտրականությունը և ծխախոտային ապրանքների ակցիզային հարկը պետք է վերացվի:

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը 2009 թվականին շարունակել է հզորացնել **մրցակցության քաղաքականության** իրավական և ինստիտուցիոնալ դաշտը:

Այն մշակել է այդ ոլորտի օրենքների փոփոխություններ, որոնք ակնկալվում է, որ կընդունվեն 2010 թվականին: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի նախկին փոփոխությունների՝ ներառյալ պետական աջակցության մասին դրույթների արդյունավետ կիրարկումը լրացուցիչ ջանքեր է պահանջում երկրորդական կիրարկման մեխանիզմների ներմուծման ուղղությամբ: Մեղմացման ծրագրի իրականացման մասին օրենքի նախագիծը ներկայումս նախապատրաստման փուլում է: 2010 թվականին նախատեսվում է ընդունել պետական աջակցության և մրցակցության քաղաքականության վերաբերյալ ԵՄ-ի *թվինինգ* ծրագիր: 2009 թվականի ապրիլին Կառավարությունը հաստատեց **«Մտավոր սեփականության** հուսալի և արդյունավետ պաշտպանության իրականացման հայեցակարգային փաստաթուղթը»: Այս փաստաթղթի կիրարկման համար 2009 թվականի օգոստոսին Էկոնոմիկայի նախարարի ղեկավարությամբ ստեղծվեց հատուկ կոմիտե, որում ներառված էին նաև իրավատերերի ու համապատասխան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանը քայլեր է ձեռնարկել նաև հեղինակային իրավունքի, աշխարհագրական տեղանունների և ապրանքային նշանների վերաբերյալ իր օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու ուղղությամբ: Հայաստանը դեռևս պետք է վավերացնի «Նոր բուսատեսակների պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիան (*UPOV* կոնվենցիա): Տարվա ընթացքում սկսվել է մտավոր սեփականության օբյեկտների կեղծման և նմանակման վերաբերյալ ուսումնասիրություն, որը դեռևս ընթացքի մեջ է: Այդուհանդերձ, հետագա լրացուցիչ ջանքեր են անհրաժեշտ օրենսդրության հստակ կիրարկման համար՝ իրավապահ մարմինների, այդ թվում՝ դատական համակարգի լիազորություններն ու վարչական հնարավորությունները հզորացնելու, ինչպես նաև մտավոր սեփականության հարցերի վերաբերյալ հանրության և իրավատերերի իրազեկությունը բարձրացնելու միջոցով: Հայաստանը շարունակել է աշխատանքներ տանել **պետական գնումների** ոլորտը կարգավորող նոր օրենսդրության մշակման ուղղությամբ: Ընդունվելու դեպքում այն ուժի մեջ կմտնի 2010 թվականի հունիսին:

Նոր օրենքի համաձայն Պետական գնումների գործակալությունը կվերակազմակերպվի Գնումների օժանդակման կենտրոնի:

Լրացուցիչ ջանքեր են պահանջվում էլեկտրոնային եղանակով գնումների իրականացման համար ուսուցման և համակարգերի տրամադրման ուղղությամբ:

**Հաշվապահության** ոլորտում Հայաստանն ավարտել է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) թարգմանությունը: Հայաստանն սկսել է նաև բանակցությունները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի հետ՝ նպատակ ունենալով ստորագրել փոքր և միջին ձեռնարկությունների համար հաշվապահական հաշվառման ստանդարտների թարգմանության մասին համաձայնագիրը: Ֆինանսների նախարարությունից անկախ՝ հաշվապահության և աուդիտի համար պատասխանատու ինքնակարգավորվող մարմնի ստեղծման գծով առաջընթաց չկա:

**Վիճակագրության** առումով Հայաստանը 2009 թվականի հունիսին ընդունել է տնտեսական գործունեության ազգային դասակարգիչը: Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանն աշխատել է նաև տարածքային միավորների դասակարգման ազգային տարբերակի մշակման վրա և շարունակել է վիճակագրության ոլորտում ԵՄ հիմնական կանոնակարգերի հայերեն թարգմանությունը:

**Ձեռնարկությունների քաղաքականության** ոլորտում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոնը (ՓՄՁ ԶԱԿ) շարունակել է աջակցել ՓՄՁ-ներին՝ պետական բյուջեից հատկացված միջոցներով ծրագրերի իրականացման միջոցով: 2008 թվականին Ձեռնարկությունների եվրոպական ցանցին (ՁԵՑ) միանալուց հետո ՓՄՁ ԶԱԿ-ն հյուրընկալվեց ՁԵՑ հաղորդակցման կենտրոնին՝ բիզնեսի, նորամուծության, տեխնոլոգիայի և հետազոտությունների հետ կապված ծառայություններ տրամադրելով հայկական ընկերություններին, աջակցելով նաև հայկական շուկայում գործարար հնարավորություններ որոնող եվրոպական ՓՄՁ-ներին: ՓՄՁ-ների ոլորտում 2009 թվականին ընդունված մի քանի օրենսդրական փոփոխություններ ուժի մեջ են մտնելու հաշվետու ժամանակահատվածից հետո՝ 2010 թվականի հունվարին:

**Ներքին պետական ֆինանսական վերահսկողության** (ՆՊՖՎ) ոլորտում Հայաստանը շարունակել է իր աշխատանքները ներքին աուդիտի վերաբերյալ օրենքի նախագծի վրա: Օրենքի նախագիծը ներառում է ներքին աուդիտի համար կենտրոնացված ներդաշնակեցման գործառույթի հիմնում: Ներկայիս ՆՊՖՎ միջավայրի թերությունների մանրամասն գնահատումից հետո, Ֆինանսների նախարարությունն սկսել է ՆՊՖՎ քաղաքականության փաստաթղթի մշակման աշխատանքները: Ղեկավարության հաշվետվողականության սկզբունքների ներդրումը դեռ շատ վաղ փուլում է գտնվում: Արտաքին աուդիտի հետ կապված՝ Վերահսկիչ պալատը կապեր է հաստատել եվրոպական երկրների բարձրագույն վերահսկիչ մարմինների հետ՝ Բարձրագույն վերահսկիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներին համահունչ վերստուգման (աուդիտի) գործող պրակտիկայի կատարելագործման համար:

## **5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Հայաստանը շարունակել է մասնակցել Հարավային Կովկասում «**Ինտեգրված սահմանների կառավարում**» տարածաշրջանային ծրագրին (SCIBM), որի շուրջ 2007 թվականին պաշտոնական համաձայնության են եկել Հայաստանը, Ադրբեջանը և



Վրաստանը: Ծրագիրը նպատակ ուներ զարգացնելու մաքսային և սահմանապահ ծառայությունների մասով միջգերատեսչական համագործակցությունը, վերապատրաստումը և կարողությունները՝ համաձայնեցված տարածաշրջանային ստանդարտներին և ԵՄ նորմերին համապատասխան: Չնայած այս ծրագրի տարածաշրջանային բնույթին՝ Ադրբեջանը նախընտրել է շարունակել համագործակցությունը միայն Վրաստանի հետ իր երկկողմ բաղադրիչի միջոցով, որի արդյունքում էլ ձգձգվել է ծրագրի իրականացման մեկնարկը մինչև 2010 թվականի մարտ ամիսը: Այնուհանդերձ, SCIBM-ի շրջանակներում Հայաստանի մաքսային և սահմանապահ ծառայությունները Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչների հետ մեկտեղ մասնակցել են նախապատրաստական վերապատրաստման դասընթացներին Ավստրիայում, Խորվաթիայում, Իտալիայում և Մլովենիայում:

Հետագայում նաև վերապատրաստման դասընթացներ են նախատեսվել սահմանային և պարեկային ոստիկանության համար, այդ թվում նաև՝ միջսահմանային սեմինարներ Վրաստանի և Ադրբեջանի սահմանային անցակետերի աշխատակիցների հետ՝ համագործակցելով ԵԱՀԿ-ի հետ:

**Միգրացիայի** պետական ծառայությունը քաղաքացիական հասարակության հետ համագործակցությամբ սկսել է միգրացիայի և ապաստանի հետ կապված խնդիրներին ուղղված Ազգային գործողությունների ծրագրի շրջանակներում մեկնարկած աշխատանքները, ինչպես նաև ԵՄ աջակցությամբ միգրացիային առնչվող խնդիրների կարգավորման ռազմավարության նախագծի շուրջ աշխատանքները: 2008 թվականին մշակված աշխատուժի միգրացիային առնչվող խնդիրների կարգավորման մասին օրենքի նախագիծը դեռ չի ընդունվել: Բացի դրանից, նախատեսվում է ստեղծել միգրացիոն հոսքերի դիտանցման նպատակով էլեկտրոնային տվյալների շտեմարան: ԵԱՀԿ-ի և Միգրացիայի միջազգային կազմակերպության աջակցությամբ՝ Հայաստանը մշակում է գործողությունների ծրագիր՝ ուղղված կենսաչափական տվյալներով էլեկտրոնային անձնագրերի և էլեկտրոնային նույնականացման քարտերի ներմուծմանը: Փաստաթղթերի պաշտպանվածության բարելավումը իշխանությունների կողմից դիտվում է որպես անհրաժեշտ քայլ՝ ԵՄ-ի հետ վիզային ռեժիմի պարզեցումից օգտվելու համար:

**Կազմակերպված հանցավորության** դեմ պայքարի առնչությամբ Հայաստանը դեռ պետք է միանա «Հրազենի, դրան համալրող մասերի և դետալների ապօրինի արտադրման և առևտրի մասով անդրազգային կազմակերպված հանցավորության մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի երրորդ արձանագրությանը, ինչպես նաև խրախուսվում է, որ այն ստորագրի և վավերացնի 2007 թվականի Եվրոպայի խորհրդի «Սեռական շահագործումից և չարաշահումից երեխաների պաշտպանության մասին» կոնվենցիան:

**Մարդկանց թրաֆիքինգի** մասով ազգային բյուջեից կատարվել է մոտ 100,000 եվրոյի հատկացում՝ ուղղված հակաթրաֆիքինգային գործողությունների ֆինանսավորմանը, այդ թվում նաև՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ Ուղղորդման ազգային մեխանիզմի և թրաֆիքինգի գոհերի համար հատուկ ապաստանի ստեղծմանը: Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների առթիվ քրեական հետապնդման 11 առանձին դեպք է գրանցվել 2009 թվականին:

Ինչպես նշվեց, Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագիրը (SCAD V) ավարտվել է 2009 թվականին: Շարունակվում են քննարկումներ այն հարցի շուրջ, թե ինչպես կարելի է առավելագույնս ապահովել գործողության արդյունքները և

տարածաշրջանային մակարդակով ջանքեր գործադրել՝ **ապօրինի թմրամիջոցների դեմ պայքարելու** նպատակով:

Ինչ վերաբերում է **փողերի լվացման** դեմ պայքարին, Եվրոպայի խորհրդի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովը (MONEYVAL) սեպտեմբերին հաստատել է Հայաստանի մասին երրորդ փուլի փոխադարձ գնահատման զեկույցը՝ ընդգծելով 2008 թվականին փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարելու նպատակով օրենսդրական դաշտում տեղ գտած բարելավումները: Ձեկույցը հրապարակվել է 2010 թվականի հունվարին: Ինչպես նշվել էր նախորդ տարի՝ դեռ առկա է փողերի լվացման, կոռուպցիայի և ահաբեկչության դեմ պայքարի մասով մարդկային և տեխնիկական ռեսուրսների շարունակական զարգացմանն առնչվող խնդիրը:

**Ոստիկանության և դատախրավական** համագործակցության ոլորտում Հայաստանը 2009 թվականի մարտին վավերացրել է 1997 թվականի «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը: Այդուհանդերձ, դրա արդյունավետ կիրարկման համար կպահանջվեն շարունակական ջանքեր՝ բարելավելու համար բոլոր իրավապահ մարմինների միջև համակարգումը և համագործակցությունը, այդ թվում՝ վերապատրաստման դասընթացներում ներդրումները: Հայաստանը վաղ փուլում վավերացրել է «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի երկու լրացուցիչ արձանագրություն, թեպետ դեռ չի ստորագրել «Հրազենի, դրան համալրող մասերի և բաղադրիչների ապօրինի արտադրման և առևտրի դեմ» երրորդ արձանագրությունը: Հայաստանը դեռ չի ստորագրել «Միջազգային դատախրավական համագործակցության մասին» Հաագայի երկու կարևոր կոնվենցիաներ, այն է՝ «Փաստաթղթերը ներկայացնելու մասին» 1965 թվականի և «Ապացույցները ձեռք բերելու մասին» 1970 թվականի կոնվենցիաները:

**Տվյալների պաշտպանության** մասով Հայաստանը 2009 թվականին չի ստորագրել 1981 թվականի «Անձնական տվյալների ավտոմատ կերպով մշակման մասով անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան, ինչպես նաև «Վերահսկիչ մարմինների և անդրասահմանային տվյալների հոսքերի մասին» լրացուցիչ արձանագրությունը:

## **6. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

2009 թվականի հոկտեմբերին Հայաստանն ընդունել է 2009-2020 թվականների **տրանսպորտի** հատվածի զարգացմանն ուղղված ռազմավարությունը: Ռազմավարությամբ նախատեսվում է կատարելագործված կառավարում, ենթակառուցվածք և տեխնոլոգիա՝ մինչև 2010 թվականն առավելագույնին հասցնելու համար տրանսպորտի ոլորտի կատարողականը, ինչպես նաև նախատեսվում է երկարաժամկետ բարեկեցություն՝ արդյունավետ, ծախսարդյունավետ և բնապահպանական տեսանկյունից անվտանգ և սոցիալապես մատչելի, կայուն զարգացող տրանսպորտային ենթակառուցվածքի և ծառայությունների ստեղծման միջոցով: Տվյալ ռազմավարությամբ նախատեսվում է կարգավորման գործառույթների անկախությունն ապահովող կարգավորման և վերահսկիչ գործառույթների տարանջատում: Հետագա կարճաժամկետ քաղաքականության առաջնահերթություններով պետք է սահմանվի ակտիվների արդյունավետ գնահատման վրա հիմնված ճանապարհատրանսպորտային ոլորտի ռազմավարություն, շոշափվի ճանապարհատրանսպորտային ոլորտի վատթարացմանը, ինչպես նաև Երևան քաղաքում քաղաքային տրանսպորտի վիճակի վատթարացմանն առնչվող խնդիրները:

Ինչ վերաբերում է ենթակառուցվածքներում ներդրումներին, Հայաստանը դրանք սկսել է 2009 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ արդիականացնելու համար “Կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցին” (LRN) պատկանող ճանապարհները: Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինության կարողությունները ներկայումս հզորացվում են: Հայաստանը դեռ 2004 թվականին որոշել է, որ յուրաքանչյուր համայնք պետք է ունենա միջպետական ճանապարհին կապող առնվազն մեկ ճանապարհ: Այս ճանապարհները կազմում են Հայաստանի 7,704 կմ ընդհանուր երկարությամբ գյուղական նշանակության ճանապարհների մոտ 3,014 կմ-ը և համարվում են գյուղական համայնքները միջպետական մայրուղիներին կապող ճանապարհային լավագույն ցանցը:

Օդային ոլորտում 2009-2020 թվականների ճանապարհատրանսպորտային ոլորտի ռազմավարությամբ նախատեսվում է կարճաժամկետ առաջնահերթություն՝ սահմանափակող առևտրային և կարգավորիչ միջոցառումները վերացնելու համար՝ ավիացիայի արդյունավետությունը և կապի հնարավորությունը բարելավելու նպատակով: Նախորդ տարի արձանագրված օդային ծառայությունների մասով հորիզոնական համաձայնագիրն ստորագրելուց հետո, տրանսպորտի ոլորտում ԵՄ-Հայաստան առավել սերտ կապերին ուղղված հաջորդ կարևոր քայլն եղավ այն, որ 2009 թվականի հուլիսին Հայաստանի իշխանությունների և Ավիացիոն անվտանգության եվրոպական գործակալության միջև ստորագրվեց աշխատանքային պայմանագիր՝ Գործակալության հետ իր կարգավորիչ համագործակցությունն ամրապնդելու և Եվրոպական անվտանգության ստանդարտների հետ համապատասխանությանն ողողված առաջընթացն ապահովելու նպատակով: Չնայած սահմանափակ մրցակցության հետևանքով Եվրոպական միության և Հայաստանի միջև օդային երթևեկության ընդլայնմանը, այնուամենայնիվ, այն դեռ սահմանափակ է մնում:

Հայաստանը նաև իրականացրել է իր **էներգետիկ** ռազմավարությունը՝ մասնավորապես ամփոփելով նոր ատոմակայանի շինարարական աշխատանքները վերահսկող ընկերություն ընտրելու համար մրցույթը: 2009 թվականի հոկտեմբերին Հայաստանը նոր ատոմակայանի կառուցման մասին օրենք է ընդունել: Նախապատրաստական փուլում է գտնվում կայանի կառուցման համար շինարարական կազմակերպություն ընտրելու համար մրցույթը: Հայաստանը պլանավորում է փակել Մեծամորի ատոմակայանը մինչև 2016 թվականը և պատրաստ է փակել կայանը մինչև սահմանված ժամկետը միայն այլընտրանքային փոխարինող կարողության առկայության դեպքում: Եվրոպական միությունը շարունակում է պահանջել կայանի փակումը մինչև այդ ամսաթիվը: Հայաստանը շարունակել է աշխատանքներ տանել Մեծամորի ատոմակայանի անվտանգության բարձրացման ուղղությամբ՝ 2009-2016 թվականների իր ծրագրի հիման վրա: Այն իրականացրել է աշխատանքներ՝ ուղղված օգտագործված միջուկային վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման ռազմավարությանը և առաջընթաց է արձանագրել աշխատած միջուկային վառելիքի չոր պահեստարանի ընդլայնման ուղղությամբ: Հայաստանը լրացուցիչ քայլեր է ձեռնարկել՝ Մեծամորի ատոմակայանի շահագործման դադարեցման մանրամասն պլանի մշակման համար: Այն շարունակել է համարել Ատոմակայանի շահագործման դադարեցման համար նախատեսվող հիմնադրամը և Ռուսաստանի Դաշնության հետ համատեղ ուսումնասիրել ուրանի պաշարները:

2009 թվականի ապրիլին Հայաստանը բարձրացրել է գազի և էլեկտրաէներգիայի սակագները՝ գազի գնի բարձրացման հետ կապված: Այն շարունակել է սովորական էլեկտրաէներգիայի գներատորների (այդ թվում նաև հիդրո) կառուցումը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի և գազի ենթակառուցվածքի վերականգնումը: Հայաստանը Վրաստանի և Իրանի միջև էլեկտրաէներգիայի լրացուցիչ կապի համար նախապատրաստական

աշխատանքներ է իրականացրել: 2009 թվականի մարտին էներգետիկ համակարգն արդիականացնելուց անմիջապես հետո էլեկտրաէներգիան արտահանելու շուրջ Հայաստանը Թուրքիայի հետ համաձայնության է եկել: 2009 թվականի մայիսին շահագործման է հանձնվել Իրան-Հայաստան գազատարը: Երկու երկրների միջև գործարքի նպատակը Հայաստան գազ արտահանելն էր, իսկ Իրան՝ էլեկտրաէներգիա: 2009 թվականի ապրիլին Հայաստանը և Իրանը հաստատել են նավթամշակման գործարանի կառուցմանն ուղղված իրենց ծրագիրը: Հայաստանը շարունակել է զարգացնել էներգախնայողության և վերականգնվող էներգիայի ծրագիրը:

**Կլիմայի փոփոխության** ոլորտում Հայաստանը շարունակել է պատրաստել «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի իր երկրորդ ազգային հաղորդագրությունը (UNFCCC), որն իր մեջ կներառի ջերմոցային գազերի գույքագրմանը, չափավորմանն և ադապտացմանն ուղղված միջոցառումները: Պատրաստվել է ջրային ռեսուրսների խոցելիության մասին հաշվետվություն: Առաջին քայլերն են արվել՝ կլիմայի փոփոխության ազդեցությունը լեռնային անտառների էկոհամակարգերի հարմարվողականության հետ կապված խնդիրները կարգավորելու համար: Գնահատվել են կլիմայի փոփոխության սոցիալ-տնտեսական ազդեցությունը գյուղատնտեսության, էներգետիկայի և անտառային տնտեսության վրա, ինչպես նաև մշակվել են քաղաքականության առաջարկություններ և միջոցառումներ: 2009 թվականի դեկտեմբերին վերանայվել և հաստատման փուլում է «Մի շարք միջազգային պարտավորությունների իրականացմանն ուղղված միջոցառումների մասին» Կառավարության 2004 թվականի որոշման՝ «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիային վերաբերող մասը:

Հայաստանը քայլեր է ձեռնարկել՝ Մաքուր զարգացման մեխանիզմի (CDM) ծրագրեր մշակելու և հետագայում հաստատելու ուղղությամբ: Եվս մեկ նման ծրագիր է գրանցվել ՄԱԿ-ի մակարդակով՝ հասցնելով գրանցված ծրագրերի ընդհանուր թիվը հինգի: Հայաստանը միացել է Կոպենհագենի համաձայնագրին և տեղեկություններ է տրամադրել հետագա գործողությունների մասին: Եվրոպական հանձնաժողովը շարունակել է օժանդակել Հայաստանին՝ Կիոտոյի արձանագրությունն իրականացնելու հարցում:

Հայաստանն սկսել է իրականացնել 2008-2010 թվականների **շրջակա միջավայրին** ուղղված իր գործողությունների ծրագիրը, մասնավորապես, օրենսդրական դաշտի զարգացման, շրջակա միջավայրի դիտանցման և թափոնների ու քիմիական նյութերի կառավարման հզորացման համար կարողությունները զարգացնելու նպատակով: Օրենսդրական դաշտը բարելավման կարիք ունի, մասնավորապես, կիրարկող օրենսդրության մասով: Օդի որակի, ջրերի կառավարման և բնապահպանական վճարների ոլորտում օրենսդրության մեջ լրացումներ և փոփոխություններ են կատարվել: Կառավարությունը որոշում է ընդունել՝ ուղղված այն ընկերությունների գրանցման գործընթացի կարգավորման վերաբերյալ, որոնց գործունեությունը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն է թողնում, և լրացուցիչ որոշումներ են ընդունվել ջրերի, բնության պահպանության, քիմիական նյութերի և թափոնների ոլորտում: Մշակման փուլում են գտնվում շրջակա միջավայրի պահպանության մասին օրենքը, ինչպես նաև բնապահպանական փորձագիտության, զենետիկորեն փոփոխված օրգանիզմների և համապատասխանության մասով ներքին մոնիտորինգի մասին օրենսդրությունը:

Հաստատվել է քիմիական նյութերի և թափոնների կառավարման ազգային ընդհանուր նկարագիրը: Նախապատրաստական աշխատանքներ են սկսվել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վտանգավոր նյութերի ռիսկերի նվազեցմանն ուղղված ազգային ռազմավարության համար: Մշտապես պետք է ուշադրություն դարձնել առկա

ռազմավարությունների և ծրագրերի իրականացմանը և էլ ավելի ակտիվացնել մոնիտորինգն ու կիրարկումը:

Որոշ քայլեր են նախաձեռնվել՝ ջրային ռեսուրսների կառավարումը հզորացնելու նպատակով: Կարևորագույն խնդիր է մնում երկրի բոլոր մակարդակներով վարչական կարողությունների հետագա ամրապնդումը: Պետական մարմինների միջև համակարգումը շարունակում է ուշադրություն պահանջել: Որոշ աշխատանքներ են կատարվել՝ հանրային այլ ոլորտներում, ինչպես օրինակ՝ տրանսպորտի ոլորտում բնապահպանական գործոնների ինտեգրումը խթանելու նպատակով: Որոշ քայլեր են ձեռնարկվել՝ համալիր թույլտվության մասին օրենսդրության մշակման ուղղությամբ:

Քննապահպանական վիճակի մասին հաշվետվությունների պատրաստման մասով էական զարգացումներ տեղի չեն ունեցել: Հայաստանն, այդուհանդերձ, շարունակել է հանրությանը տեղեկություններ տրամադրելու նպատակով այլ գործողություններ իրականացնել: *(Կովկասի համար շրջակա միջավայրի հարցերով տարածաշրջանային կենտրոն, տե՛ս Գլուխ 2)*

Ներկայումս մշակման փուլում գտնվող համապատասխանության ինքնադիտանցման մասին օրենսդրության նախագիծը ներառում է շրջակա միջավայրի ազդեցության գնահատման մասին դրույթներ, այդ թվում՝ հանրային մասնակցության վերաբերյալ: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել միջավայրի վիճակի գնահատումների համատեքստում ընթացակարգերին և հանրության հետ խորհրդատվությանը: Էսփուի կոնվենցիան կիրարկող կոմիտեն Հայաստանին պահանջ է ներկայացրել Կոնվենցիային համապատասխանեցնելու նպատակով վերանայել իր շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին օրենսդրությունը, ինչպես նաև համապատասխանեցման ընթացքի մասին հաշվետվություն ներկայացնել: Հայաստանը ներկայացրել է իրականացմանն ուղղված բավարարող ռազմավարություն:

Հայաստանը մի շարք քայլեր է ձեռնարկել՝ «Օդի աղտոտիչների մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային տեղափոխության մասին» ՄԱԿ-ի Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ-ի ԵՏՀ) կոնվենցիայի՝ Եվրոպայում դիտարկումների և գնահատման համատեղ ծրագրի (ԵԴԳՀԾ)<sup>1</sup> արձանագրությանը միանալու ուղղությամբ: ՄԱԿ-ի ԵՏՀ մնացած համապատասխան կոնվենցիաներին և արձանագրություններին<sup>2</sup> միանալու կամ դրանց վավերացման մասով զգալի զարգացումներ տեղի չեն ունեցել: Ավելին, առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի մի շարք արդեն իսկ վավերացված համաձայնագրերի կիրառմանը: Հայաստանը մասնակցել է ԵՄ Ջրային նախաձեռնությանը, ինչպես նաև երկխոսություն է վարել ազգային քաղաքականության շուրջ:

Եվրոպական հանձնաժողովի և Հայաստանի միջև իրականացվել է համագործակցություն և տեղի է ունեցել տեղեկատվության փոխանակում՝ մասնավորապես ջրերի, անտառային տնտեսության, թափոնների կառավարման, շրջակա միջավայրին վերաբերող տվյալների, բնության պահպանության և օդի որակի շուրջ:

**Քաղաքացիական պաշտպանության** ոլորտում Հայաստանը 2009 թվականի դեկտեմբերին մասնակցել է տեխնոլոգիաների և բնական վտանգները կանխելու, դրանց պատրաստ

<sup>1</sup> Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագրի համար համագործակցության ծրագրի երկարաժամկետ ֆինանսավորման մասին արձանագրություն

<sup>2</sup> ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի, ՄԱԿ-ի ԵՏՀ «Միջսահմանային լճերի և անդրսահմանային ջրահոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիայի՝ շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման մասին արձանագրություն և այլ համապատասխան արձանագրություններ

լինելու և դրանց արձագանքելու վերաբերյալ Արևելյան գործընկերության առաջնորդող նախաձեռնության մեկնարկին նվիրված միջոցառմանը:

**Տեղեկատվական հասարակության** ոլորտում կարգավորմանն ուղղված բարեփոխումների մշակման գործում օգնելու նպատակով 2009 թվականի հունիսին Տրանսպորտի և կապի նախարարությունում տեղի է ունեցել հաղորդակցմանը վերաբերող խնդիրների կարգավորման հարցերով աշխատանքային խմբի առաջին հանդիպումը: Այդ հանդիպմանը մասնակցել են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածների ներկայացուցիչներ և պատասխանատու պաշտոնյաներ:

2009 թվականի փետրվարին ութ տեղական օպերատորի շնորհիվ էն հանրային ցանցի թվային կարողություններ և ծածկագրեր՝ Հայաստանում ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ առաջարկելու նպատակով: Յուրաքանչյուր ընկերության ցանց միացվելու է տվյալ պահին *փաստացի* գործող մենաստիբոջը: **Տեսալսողական** ոլորտում խնդրահարույց է մնում այլ երկրներից ստացվող հեռուստահեռարձակման ընդունման և վերահեռարձակման ազատությունը, քանի որ Հայաստանը դեռ չի վավերացրել «Անդրսահմանային հեռուստատեսության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:

Հայաստանը համեմատաբար համեստ ձեռքբերումներ ունի **հետազոտության** ոլորտում ներդրումների և կարողությունների մասով: Այնուհանդերձ, Հայաստանի մասնակցությունը 7-րդ շրջանակային ծրագրին (FP7) նախորդ FP6-ի համեմատ մեծացել է, ինչի մասին վկայում է այն, որ 2009 թվականի նոյեմբերին հաստատվել են 17 հետազոտական կազմակերպության կողմից ներկայացված դիմումները, որի արդյունքում էլ Եվրոպական միությունն այդ կազմակերպություններին հատկացրել է 690,000 եվրո, մասնավորապես՝ «միջազգային համագործակցության» տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (S2S) ու «Մարի Կյուրի» մրցույթների հրավերների շրջանակներում:

Հայաստանը շարունակել է ակտիվորեն մասնակցել Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների (FP7 IncoNet EECA ծրագիր) համար միջազգային համագործակցության ցանցին, որի նպատակն է աջակցել ԵՄ-ԱԵԿԱ տարածաշրջանների միջև գիտությանը և տեխնոլոգիային վերաբերող քաղաքականության երկխոսությանը և մեծացնել ԱԵԿԱ-ի մասնակցությունը FP7-ին:

## **7. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՇՓՈՒՄՆԵՐ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

**Բարձրագույն կրթության** ոլորտում Կրթության և գիտության նախարարությունը, համալսարանի մասնակցությամբ, ստեղծել է հինգ աշխատանքային խումբ՝ որակավորման շրջանակների, կրեդիտների կուտակման, ֆինանսական կառավարման, որակի ապահովման մեխանիզմների և հետբուհական կրթության մասով Բոլոնիայի գործընթացի պահանջների կատարմանը նպաստելու նպատակով: Բոլոնիայի գործընթացով նախատեսվող դիպլոմի ներդիրը, որը բարձրագույն կրթության որակավորումների մասով ապահովում է առավել մեծ թափանցիկություն, ներմուծվել է Հայաստանի համալսարաններում և բուհերում 2009 թվականի ընթացքում:

Հայաստանը շարունակել է իր ակտիվ մասնակցությունը Erasmus Mundus կրթաթոշակային ծրագրին, ինչպես նաև Tempus IV ծրագրին, որտեղ մասնակցությունը Tempus III-ի հետ համեմատած առավել մեծ է:

Erasmus Mundus Action 1-ի շրջանակներում 2009-2010 ուսումնական տարվա համար Erasmus Mundus մագիստրոսի կոչում շնորհող դասընթացների համար կրթաթոշակներ են

շնորհվել տասներեք ուսանողի և մեկ դասախոսի, մինչդեռ դասախոսների և ուսանողների շարժունակությունն էլ ավելի է դյուրացվել Erasmus Mundus Action 2-ի շրջանակներում միննույն ժամանակահատվածում 35 շարժունակության խթանմանն ուղղված դրամաշնորհների տրամադրման միջոցով: Հայաստանի համալսարաններին ընձեռված է նաև Ժան Մոնե ծրագրին մասնակցելու հնարավորություն:

Մասնագիտական կրթության և վերապատրաստման մասով 2009 թվականին տեղի ունեցող զարգացումների հիմնական շեշտը դրվել է ուսուցիչների վերապատրաստման, տեխնիկումների վերազինման ոլորտում 2008 թվականին նախաձեռնված բարեփոխումների ամրապնդման և շարունակական իրականացման, ինչպես նաև որակավորման ստանդարտների զարգացման և ԵՄ զգալի օժանդակությամբ որակավորման ազգային շրջանակի նախագծի վրա (տե՛ս Գլուխ 8): Մասնագիտական կրթության և վերապատրաստման ու ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման մասով սոցիալական գործընկերության հասկացությունները հաստատվել են Կառավարության կողմից հոկտեմբեր ամսին: Կրթության և գիտության նախարարությունը շարունակել է մշակել որակավորումների ազգային շրջանակ՝ Մասնագիտական կրթության և վերապատրաստման զարգացման հարցերով ազգային կենտրոնի կողմից մշակված մասնագիտական ունակությունների վրա հիմնված ստանդարտների հիման վրա:

**Մշակույթի** նախարարությունը շարունակել է իրականացնել Մշակույթի զարգացման գործունեության քառամյա ռազմավարությունը (2008-12)՝ շեշտը դնելով մշակութային քաղաքականության, մշակութային ժառանգության, ոչ նյութական մշակույթի թվայնացման և ժողովրդական մշակույթի խթանման արդյունավետ համակարգման վրա: Ինչպես այս առումով նշվել էր 2008 թվականին, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մշակութային քաղաքականության արդյունավետ ապակենտրոնացմանը նպաստելուն՝ միաժամանակ ապահովելով ռազմավարության իրականացման գործում քաղաքացիների և երիտասարդների առավելագույն մասնակցությունը: Հայաստանի մշակութային կազմակերպությունները մասնակցել են Մշակութային ծրագրի շրջանակներում 2009 թվականի ԵՀՔ հատուկ գործողության առաջարկների ներկայացմանը:

Հայաստանի երիտասարդությունը և **երիտասարդական** կազմակերպությունները շարունակել են օգուտ քաղել Գործողության ծրագրում երիտասարդության կողմից առաջարկվող հնարավորություններից՝ փոխանակումների, կամավոր ծառայության և ոչ ֆորմալ կրթության մեջ երիտասարդական համագործակցության աշխատանքների միջոցով:

Հայաստանը բարեփոխումներ է իրականացրել **առողջապահության** ոլորտում, մասնավորապես՝ առաջնային առողջապահության և առողջության ապահովագրության ոլորտներում: Բարեփոխումները պետք է նպաստեն ապահովագրական վճարով չծածկված գումարի վճարումների նվազեցմանը: 2009 թվականին Կառավարության հավանությանն է արժանացել 2010-2015 թվականներն ընկած ժամանակահատվածի համար Երեխաների և պատանիների առողջության և զարգացման ռազմավարությունը և գործողության ծրագիրը: Վարակիչ հիվանդությունները, ինչպես օրինակ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ և թոքախտը շարունակում են մնալ որպես արդի մարտահրավեր: 2009 թվականի հոկտեմբերին Հայաստանը մասնակցել է նորաստեղծ ԵՄ առողջապահական հարցերով տեղեկատվական ընդլայնված կոմիտեին:

## **8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԹՎԵՐԸ**

2007-2010 թվականների Ազգային ինդիկատիվ ծրագրի շրջանակներում Հայաստանի համար Եվրոպական հարևանության քաղաքականության գործիքի (ԵՀՔԳ) փաթեթի արժեքը կազմում է 98.4 մլն եվրո: Ծրագիրը հիմնական շեշտը դնում է երեք առաջնային ոլորտների

վրա՝ 1) ժողովրդավարական կառույցների և արդյունավետ կառավարման ամրապնդում, 2) կարգավորմանն ուղղված բարեփոխումներ և վարչական կարողությունների ստեղծում և 3) աղքատության նվազեցմանն ուղղված ջանքեր:

Մասնագիտական կրթությանը և վերապատրաստմանն ուղղված 2007 թվականի տարեկան գործողությունների ծրագիրը (16 մլն եվրո արժողությամբ) իրականացման վերջին փուլերում է գտնվում: 2007 թվականի ոլորտային ծրագիրն առաջընթաց է արձանագրել և վերջինիս պլանավորված աշխատանքներն ամփոփվել են 2009 թվականի վերջին: Երկրորդ (և վերջին) սահմանված տրանշի համար վերջնական ստուգման առաքելությունը հետաձգվել է մինչև 2009 թվականի դեկտեմբեր՝ մատակարարումների հետ կապված ձգձգումների պատճառով: Այդ իսկ պատճառով, վերջնական վճարը կատարվելու է 2010 թվականի կեսին: Ավելին, կարգավորմանն ուղղված բարեփոխումներին և վարչական կարողությունների ստեղծմանն աջակցելու համար 5 մլն եվրո արժողությամբ տեխնիկական աջակցության/*թվինինգ* փաթեթը դեռևս իրականացման փուլում է:

Դատախիրավական բարեփոխումներին աջակցության վերաբերյալ 2008թ տարեկան գործողությունների ծրագիրը (18 մլն եվրո արժողությամբ) գտնվում է իրականացման փուլում: 2008 թվականի դատախիրավական բարեփոխումների ծրագրի 8 մլն եվրո կազմող նախնական սահմանված տրանշը իրականացվել է 2009 թվականի վերջին: Ներկայումս մշակման փուլում է գտնվում 6 մլն եվրո արժողությամբ տարեկան գործողության ծրագրի 2008 թվականի տեխնիկական աջակցության/*թվինինգ* փաթեթը:

Առաջին *թվինինգ* ծրագիրը մեկնարկել է 2009 թվականին (աջակցություն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին), իսկ երկրորդ ծրագիրը մեկնարկել է 2010 թվականին (աջակցություն Ստանդարտ ծախսերի մոդելի ներդրմանը՝ Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ): Ներկայումս երեք *թվինինգ* ծրագրեր են հրապարակվում անդամ պետությունների կողմից առաջարկություններ ներկայացնելու համար (քաղաքացիական ավիացիա, մրցակցություն, ազգային վիճակագրություն):

2009 թվականին Եվրոպական հանձնաժողովը շարունակել է աջակցել Հայաստանում պետական մակարդակով բարեփոխումներին ուղղված ջանքերին և ԵՀԲԳ-ի շրջանակներում նախատեսել է 24.7 մլն եվրո ընդհանուր արժողությամբ աջակցություն: 2009 թվականի Գործողությունների տարեկան ծրագիրը հիմնական շեշտը դրել է հետագա տնտեսական զարգացմանը և սոցիալական համերաշխությանն ուղղված շարունակական օժանդակության վրա: Այս փաթեթի շրջանակներում մասնագիտական կրթության և վերապատրաստման բարեփոխումների իրականացումը շարունակելու նպատակով 15 մլն եվրո է հատկացվել՝ որպես ոլորտին ուղղված բյուջետային աջակցության գործունեության իրականացում: Եվս 9.7 մլն եվրո է հատկացվել տեխնիկական աջակցության և *թվինինգ* գործառնությունների համար:

Նախատեսվում է 157.3 մլն եվրո արժողությամբ ինդիկատիվ ֆինանսական փաթեթ՝ օժանդակելու 2011-2013 թվականներին Հայաստանում համագործակցությանն ուղղված աշխատանքներին՝ Եվրոպական հանձնաժողովի՝ 2010 թվականի մարտի որոշման հիման վրա:

Երկկողմ հատկացումից բացի՝ Հայաստանը նաև օգտվել է մի քանի երկրների կողմից և տարածաշրջանային մակարդակով իրականացվող ԵՀԲԳ ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվող համագործակցությանն ուղղված աշխատանքներից, ինչպես նաև հորիզոնական թեմատիկ ծրագրերից, ինչպես օրինակ՝ Ժողովրդավարության և մարդու իրավունքների Եվրոպական գործիք (EIDHR) և Ոչ պետական դերակատարները և տեղական իշխանությունները զարգացման ծրագրում (NSA/LA): Հայաստանը նույնպես կարող է



համագործակցել Սնծովյան ավազանի երկրների միջև միջսահմանային համագործակցության (CBC) ԵՀՔԳ ծրագրի շրջանակներում:

Կայունությանն ուղղված գործիքի միջոցով անհետաձգելի օգնություն է տրամադրվել հետընտրական կայունացմանն ուղղված աշխատանքներին՝ 2 մլն եվրո ընդհանուր բյուջե ունեցող ԵՄ խորհրդատվական խմբի տեսքով: Ավելին, 2009 թվականին Եվրոպական միությունն ընդունել է որոշում՝ Հայաստանի Կառավարությանը տրամադրել մակրոֆինանսական օժանդակություն՝ գլոբալ ֆինանսական ճգնաժամի հետևանքները մեղմացնելու նպատակով: Փաթեթով նախատեսվում է 65 մլն եվրո արժողությամբ վարկ և 35 մլն եվրո արժողությամբ դրամաշնորհ: Հատկացումները նախատեսվում է կատարել 2010 թվականի առաջին կեսին:

Հարևանության ներդրումային գործիքի (ՀՆԳ) շրջանակներում 2009 թվականին Հայաստանում հաստատվել է երկու՝ 14.6 մլն եվրո արժողությամբ հատկացումներ և տեխնիկական աջակցություն տրամադրող ծրագիր՝ ակնկալելով Եվրոպական ֆինանսական կազմակերպությունների կողմից 23 մլն եվրո արժողությամբ վարկ բնապահպանության և տրանսպորտի ոլորտներում: Ավելին, 2009 թվականին նույնպես հաստատվել են երեք տարածաշրջանային ծրագրեր, որոնց չափանիշներին համապատասխանում է Հայաստանը՝ տրամադրելով 24 մլն եվրո արժողությամբ դրամաշնորհ՝ ակնկալելով տրամադրել 372 մլն արժողությամբ վարկեր/ներդրում Եվրոպական ֆինանսական կազմակերպություններից էներգետիկայի և ֆինանսական հատվածներում:

Ինչ վերաբերում է միջուկային անվտանգության ոլորտում աջակցությանը, ներկայումս իրականացվում են Միջուկային անվտանգության շուրջ համագործակցության գործողության (INSC) 2009 ծրագրի վերաբերյալ գործիքի շրջանակներում (այդ թվում՝ Ազգային կարգավորչի) իրականացվող 11 մլն եվրո արժողությամբ Մեծամորի ատոմակայանի՝ տեղում օժանդակության տրամադրման և սարքավորումների տրամադրման համար նախատեսվող ծրագրեր: Ընդհանուր 2.3 միլիոն եվրո արժողությամբ Հայաստանի միջուկային կարգավորիչ մարմնի անվտանգության մշակույթի բարելավմանն ուղղված երկու այլ ծրագրեր, ինչպես նախատեսված էին նախին գործողությունների ծրագրերով, դեռ ընթացքի մեջ են:

2009 թվականին Եվրոպական ներդրումային բանկը Հայաստանի Կառավարության հետ որևէ փոխառության գործառնություններ չի ստորագրել:

2009 թվականին դոնորների ընդհանուր համակարգումը հիմնականում կատարվել է չորս առաջատար դոնորների միջև համագործակցությամբ (ՀԲ, ԱՄՀ, ԱՄՆ միջազգային զարգացման ծրագիր և Եվրոպայի խորհուրդ)՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ: Նշված դոնորները առնվազն երեք ամիսը մեկ կազմակերպում էին դոնորների ընդհանուր համակարգման ժողովներ՝ հրավիրելով նաև այլ դոնորներ: Ավելին, հայկական կողմն սկսել է փաստացի պատասխանատվություն կրել դոնորների աշխատանքների համակարգման համար: